

Համայնքային ծառայության թափուր պաշտոն
զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին
08.04.2019

Տիպ` [Համայնքային ծառայության թափուր պաշտոններ](#)

Հայտատու` Դոդսի համայնքապետարան

<Համայնքային ծառայության մասին > ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մաս

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈԴՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ /ԾԱԾԿԱԳԻՐ` 3.2-1/ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ

ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. ՀՀ Արմավիրի մարզի Դոդսի համայնքապետարանի

աշխատակազմի առաջի կարգի մասնագետ /ծածկ. 3.2-1/:

Առաջի կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի

հանձնարարությամբ նպաստում է համայնքում ֆիզիկական

կուլտուրայի և սպորտի զարգացմանը: Ապահովում է աշխատակազմի

փաստաթղթային շրջանառությունը և լրացնում է համապատասխան

փաստաթղթերը: Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ

հետևում է աղբահանության և սանիտարական մաքրման

աշխատանքների ընթացքին: Իրականացնում է սույն պաշտոնի

անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է`

_ միջնակարգ կրթություն

_ ունի ՀՀ Սահմանադրության , «Համայնքային ծառայության

մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Նորմատիվ

իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքների, աշխատակազմի

կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական

ակտերի անհրաժեշտ իմացություն , ինչպես նաև տրամաբանելու և

տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

_ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով

աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված

մրցույթը կկայանան 2019 թվականի մայիսի 13-ին ժամը 14:00-ին

Դոդսի համայնքապետարանում, որը գտնվում է մշակույթի տան

շենքում / հասցե` գ.Դոդս, Բաղրամյան փ 1-ին նրբանցք 6/:

Դիմող ՀՀ քաղաքացիները Դոդսի համայնքապետարանի

աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է

ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

_ դիմում մրցույթային հանձնաժողովի անունով / ձևը լրացվում է

փաստաթղթերը ներկայացնելիս/

– տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին,

– հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801 –Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

– հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

– արական սեռի անձիք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները,

– մեկ լուսանկար 3×4 չափսի,

– անձնագրի պատճեն:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Դոդսի համայնքապետարան / հեռ.՝ 094-33-99-31/, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն / հասցե՝ քաղ. Արմավիր , Աբովյան 71, հեռ.՝ 0237-2-07-70, - 2-76-49/:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2019 թվականի ապրիլի 29 ներառյալ:

Գ.Դոդս

2019 թ ապրիլի 8

Հասցե՝ Արմավիրի մարզ գ. Դոդս Բաղրամյան փ 1-ին նրբ.6

Հեռ.՝ 094-33-99-31

Էլ. փոստ՝ doghs.armavir@mta.gov.am